Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2023-2024 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
10 – րդ դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ 2միավոր

ա. ՀՀ քաղաքային բնակավայրերում գործազուրկների թիվը գյուղական բնակավայրերում գործազուրկների թվից մեծ է

բ. Տղամարդ գործազուրկների թիվը Հայաստանում գերազանցում է կին գործազուրկների թվին

գ. ՀՀ արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը վերջին տարիներին գերազանցում է ՀՀ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թվին

դ. ՀՀ տարածքում մշակող արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը գերազանցում է հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների թվին

ե. Աշխարհում ծովափից հեռավորության և բնակչության խտության ցուցանիշների միջև դիտվում է դրական կոռելյացիա

զ. Աշխարհի երկրներում բնակչության կրթական ցենզի և կյանքի միջին տևողության ցուցանիշների միջև դիտվում է բացասական կոռելյացիա

է. Ուրբանիզացման մակարդակի և բնակչության ծնելիության մակարդակի ցուցանիշների միջև դիտվում է բացասական կոռելյացիա

ը. Զարգացող երկրներում ծնելիության մակարդակի և տնտեսական աճի ցուցանիշների միջև հիմնականում դիտվում է դրական կոռելյացիա

2. Նկարագրով որոշել պետությունը 1միավոր

Իրանական լեզվախմբին պատկանող ժողովրդով բնակեցված այս ներցամաքային դիրք ունեցող, լեռնային երկիրը աշխարհում առաջինն է արտերկրից վարձու աշխատողների կողմից տուն ուղարկվող գումարների և ՀՆԱ-ի միջև հարաբերակցությամբ:

3. Նշված եզրույթներից ո՞րն է բնութագրում ռասիստական քաղաքականությունը 1միավոր

ա. բենթոս բ. նիվալ գ. կաբոտաժ դ. ապարտեիդ

4. Ելնելով բերված աղյուսակի տվյալներից՝ գծեք Մեղրի քաղաքի կլիմայագրամը (1միավոր) և պատասխանեք հարցերին (յուր.՝ 1միավոր)

	Ամիսներ											
	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Տեղումներ, մմ	16	18	26	38	48	26	10	8	11	20	26	12
Ջերմաստիճան, °C	0.9	2.9	7.9	13.5	18.5	22.7	25.8	25.4	21	15.3	8.6	3.1

ա. Կլիմայի վերընթաց ո՞ր տիպն է տիրապետող Մեղրիում 1միավոր

բ. Որքա՞ն է ջերմաստիճանների տարեկան ամպլիտուդը 1միավոր

5. Խնդիրներ

ա. Որոշել տեղական ժամանակը Երևանում, եթե Լոնդոնում նույն պահին տեղական ժամանակը 15:04 է: 1միավոր

բ. Երկու նավահանգիստները գտնվում են միևնույն միջօրեականի վրա, սակայն նրանցից մեկը հյուսիսային արևադարձի վրա է, մյուսը՝ հյուսիսային բևեռային շրջագծի: Քանի ժամ կտևի ուղղաթիռի թռիչքը երկու նավահանգիստների միջև՝ միջօրեականի ուղղությամբ, եթե թռիչքի միջին արագությունը 129կմ/ժամ է: 1միավոր

6. Թվարկել

ա. Հզորությամբ առաջատար 4 էլեկտրակայանները Հայաստանում՝ նշելով էլեկտրակայանի տեսակը 1միավոր

բ. Ամբողջովին կամ մասամբ արևմտյան կիսագնդում գտնվող 4 երկիր, որոնցով անցնում է հասարակածը 1միավոր

7. Դասավորել նշված լեռները ըստ տարվա ընթացքում դրանց գագաթին արևի ճառագայթների անկման առավելագույն անկյան՝ նվազող հաջորդականությամբ: Հատիս, Պոպոկատեպետլ, Քենիա, Կոսցյուշկո 1միավոր

8. Բացատրել

ա. Ինչո՞վ է պայմանավորված մթնոլորտի զարգացման անթթվածին փուլում թթվածնի պարունակության չնչին աճը, եթե համաձայն տիրապետող վարկածի այդ փուլում թթվածնի աղբյուրները առկա են եղել և թթվածինը արտադրվել է: 1միավոր

բ. Ինչու՞ է վերջին երեք տասնամյակներին համաշխարհային տրանսպորտում ներքին ջրային տրանսպորտի դերը նվազել: Բերել երկու հիմնական պատճառ 1միավոր

9. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին



ա. Ո՞ր ժամանակահատվածում է դիտվել միջուկային էներգիայի արտադրության ամենամեծ բացարձակ անկումը և քանի՞ տերավատ ժամ է եղել այդ անկումը 1միավոր

բ. Որո՞նք են նման նվազման երկու պատճառները 1միավոր

10. Բացատրել հասկացությունը և պատասխանել հարակից հարցերին

ա. Ի՞նչ է ուղղահայաց գյուղատնտեսությունը: Ո՞րն է դրա գլխավոր առավելությունը (1միավոր):

բ. Ի՞նչ է ուղղության անկյունը: Ի՞նչ է մագնիսական խոտորումը (1միավոր):

11. Տրամագրերը համապատասխանեցնել երկրներին (օր.՝ Ա- 5) 2 միավոր





Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ասատրյան